

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻՆ ԵՎԻՐՎԱՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶՈՐՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎՐ

Սեպտեմբերի 11—17-ը Երևանում տեղի ունեցավ Հայ ճարտարապետությանը, մանրանկարչությանը, քանդակագործությանը, կերատական արվեստին, արվեստաբանությանն ու հայագիտությանը, այլ երկրների արվեստների հետ հայ արվեստի փոխադարձ կապերի քննությանը նվիրված միջազգային շորրորդ գիտաժողովը, որի աշխատանքներին մասնակցում էին սովետական և արտասահմանյան մոտ 160 գիտնականներ, արվեստաբաններ, հայագետներ։ Կարգացված բազմաթույն դասկ զեկուցումներում և հաղորդումներում շրջանառության մեջ դրվեցին, ընդհանրացվեցին այն կարևոր նվաճումները, որ ձեռք են բերվել վերջին տարիներին հայ արվեստի ուսումնասիրության բնագավառում։

Գիտաժողովի բացմանը և լիազուցար նիստին՝ սեպտեմբերի 11-ին, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում, ներկա էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Կ. Դալլաթյանը, ՀԿԿ Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Ս. Ավետիսյանը։

Գիտաժողովը ներածական խոսքով բացեց գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Յու. ԽոջաՄիրյանը։ Տասը տարի առաջ Խտալիայի Բեռլինի քաղաքում տեղի ունեցած հայ արվեստին նվիրված միջազգային առաջին գիտաժողովը հիմք դրեց մի ավանդույթի, առաջ նա, որի նշանակությունն անգնահատելի է հայ ժողովրդի գեղարվեստական ծառանգությանը, նրա մշակույթի պատմության ուսումնասիրության բնագավառում։ Այդ և հաջորդ երկու գիտաժողովները կրկին անգամ վկայեցին, թե որքան ավելի համակողմանի, արդասավոր ու իմաստալից է դառնում մի ժողովրդի մշակույթի ուսումնասիրությունը, երբ դրան իրենց անխոնջ ու անշահախնդիր մասնակցություն են բերում այլ ժողովուրդների գիտնականները։ Սովետական Միությունը, որ պաշտպանում է աշխարհում խաղաղության ամրապնդման ազնիվ գործը, հանդես է գալիս որպես միջազ-

գային կապերի զարգացման, գիտական արդյունավետ համագործակցության շատագույն Դրա վկայություններից մեկն էլ ներկա գիտաժողովն է։ Նման գիտաժողովներն ավելի ակնառու են դարձնում այն իրողությունը, որ համաշխարհային արվեստի ընդհանուր պատմության ուսումնասիրությունն անհնար է առանց աշխարհի բոլոր ժողովուրդների ստեղծած նյութական և հոգեբարձր արժեքների հետազոտման։

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում ստեղծել է արվեստի այնպիսի կոթողներ, այնուհետև առաջ Յու. ԽոջաՄիրյանը, որոնք իրենց մնալուն տեղն ունեն համաշխարհային գեղարվեստական մշակույթի մեջ։ Դրանք, ճիշտ է, մոտ մեկուկես դար առաջ գրավեցին եվրոպական գիտնականների ուշադրությունը, սակայն դրանց համակողմանի ու հիմնավոր ուսումնասիրությունը կապված է ողուական արևելագիտության դարձյալ դարի վերջերից սկսվեցին Անիի հուշակավոր պեղումները։ Հայ արվեստի հետազոտության գործն ավելի լայն թափ ստացավ սովետական կարգերի պայմաններում։ Գիտական ուսումնասիրություններն ակնհայտ դարձրին այն փաստը, որ Արևելքի ու Արևմուտքի միջև ապրած ու արարած ժողովրդի մշակույթը միահյուսել է հին արևելքը և հելլենական աշխարհը, և որ այն, պահպանելով իր ինքնատիպությունը, ոչ միայն կրել, այլև թողել է ազդեցություններ։ Ապա կազմկոմիտեի նախագահը նշեց, որ հայագիտության զարգացման և համաշխարհային հասարակայնությանը հայ մշակույթին ավելի լայնորեն ծանոթացնելու գործում մեծ ավանդ ունեն Միության եղբայրական հանրապետությունները, Մոսկվայի ու Լենինգրադի գիտնականները, արտասահմանյան մի շարք երկրների, մասնավորապես Իտալիայի արվեստաբանները։ Ուրախալի է նաև այն, որ այսօր արդեն ճանաչված ու վաստակ ունեցող գիտնականների կողմից երևան է գալիս երիտասարդ ու խոստումնալից գիտնականների մի սերունդ, որն իր առաջին քայ-

սին, իսկ երրորդի զեկուցումը նվիրված էր հայ ճարտարապետության Արցախի զարթոյին:

Այնուհետև իտալահայ գիտնական Գաբրիելա Ուլուհոջյանը գիտաժողովի մասնակիցներին հաղորդեց Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետի պրոֆեսոր Ադրիանո Ալպագո նովելլիի ողջույնը, որը չէր կարողացել իր մասնակցությունը բերել ներկա գիտաժողովին: Նա նաև գիտաժողովի կազմկոմիտեին մատուցեց հայ արվեստին նվիրված III գիտաժողովի նյութերի իտալիայում հրատարակված ժողովածուն:

Եզրափակման խոսքով հանդես եկավ գիտաժողովի կազմկոմիտեի նախագահի տեղակալ, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի դիրեկտոր, հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ռ. Զարյանը: Մեր հյուրերից շատերը, ասաց նա, հայ արվեստին ու ճարտարապետությանը ծանոթ էին զրբերից կամ լուսանկարներով գիտելին մեր հուշարձանները: Այժմ նրանք դրանք տեսան սևփական աչքերով, ծանոթացան տեղանքին, հայկական բնապատկերին, վերջապես ծանոթացան այդ արժեքները մշտադաջող ու կառուցող արվեստագետի և շինարարի հետ, որն անշափ կարևոր է: Գիտաժողովի մասնակիցներն իրենց զեկուցումներով շրջանառության մեջ դրեցին ուշագրավ և նոր շատ նյութեր, օժանդակեցին երևան հանելու նոր, երբեմն անսպասելի տեսակետներ այս կամ այն քիչ ուսումնասիրված խնդիրները վերլուծելիս, հանգեցին հուշարձանների համապարփակ և համադրական եզրահանգով ուսումնասիրության անհրաժեշտությանը, դրանք գիտեցին ոչ միայն որպես նյութական մշակութի առարկա, այլև որպես մեր նախնիների հոգևոր եռանդի և ստեղծագործական անսպառ հնարավորությունների նյութականաց-

ման մարմնավորում: Գիտաժողովին մասնակցեցին 164 գիտնական, շարունակեց Ռ. Զարյանը, Սովետական Միության տարբեր հանրապետություններից, Մոսկվայից և լենինգրադից՝ 66 մարդ, Սովետական Հայաստանից՝ 62 և արտասահմանյան 14 երկրից՝ 46 գիտնական: Զորս մասնաճյուղերում և լիազումար նիստերում լսվել է 138 զեկուցում: Մտքերի աշխույժ փոխանակության մթնոլորտում են անցել մասնաճյուղերի բոլոր նիստերը:

Այնուհետև Ռ. Զարյանն ասաց, որ վաղածամ է, անշուշտ, գիտական հիմնավոր ամփոփման փորձ իսկ անել: Երբ լույս տեսնի այս գիտաժողովի նյութերն ամփոփող շորսահատորյակը, դրանից հետո կարելի կլինի, թերևս, որոշակի եզրահանգումներ կատարել, իայց անվիճելի իրողություն է այն, որ այս գիտաժողովը այն մեծ շղթայի մի օղակն է. որ հայագիտություն է կոչվում իր ամենաբազմազան ճյուղերով, և որի բուն կենտրոնը Սովետական Հայաստանն է: Գիտաժողովը մեր երկրի արվեստի պատմության ուսումնասիրության մեջ շատ նոր էջեր բացեց, ականառու ցույց տալով սովետական և միջազգային գիտական հասարակայնության մեծ հետաքրքրությունը դեպի Հայաստանի մշակութային Ապա Ռ. Զարյանը նշեց, որ գիտաժողովի մասնակիցներից յուրաքանչյուրն իր ներդրումն ունեցավ հայ արվեստին նվիրված այս օղակի աշխատանքներում: Բոլորի արածը միասին վերցրած, ասաց նա, հայ արվեստի և ճարտարապետության վերաբերյալ մեր գիտությունը մի քայլ ևս առաջ մղեց:

Վերջում գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ Յ Ռ. Խոջա միրյանը կազմկոմիտեի անունից շնորհակալություն հայտնեց գիտաժողովի բոլոր մասնակիցներին, նրանց ցանկացավ գիտական նորանոր նվաճումներ:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ